ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք. Գավառ ***03.07.2014 թ.***

Նախագահում էր մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 92 անդամներից 85-ը:

Մասնակցում էին մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Խլղաթյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, ՀՀ տարածքային կառավարման նախարարության վարչական վերահսկողության բաժնի պետ Հովհաննես Օհանյանը և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզում 2014 թվականի գարնան գյուղատնտեսական աշխատանքների ամփոփման, առաջիկա խնդիրների և արոտային շրջանում գյուղատնտեսական կենդանիների բուժկանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու մասին:
   /Զեկ. Վանիկ Հովհաննիսյան - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

2. Մարզի համայնքների բյուջեների 2014 թվականի կիսամյակի սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:
   /Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

3. Մարզի համայնքներում 2014 թվականի առաջին եռամսյակում վարչական հսկողություն իրականացնելու արդյունքների մասին:
   /Զեկ. Իվան Ասատրյան - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ/

4. Այլ հարցեր:

Արտահայտվեցին՝

Արծրուն Ղարիբյանը - Ակունք համայնքի ղեկավար
Լյովա Աբրահամյանը - Շատվան համայնքի ղեկավար

Հայտարարություններով հանդես եկան մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գարիկ Բաղալյանը, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Յուրա Մուշեղյանը:

Մարզխորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը:

Առաջարկվեց մարզի համայնքների ղեկավարներին՝

1) համայնքների հնարավորությունները օգտագործել բերքահավաքի աշխատանքները հնարավորինս ժամանակին և արդյունավետ իրականացնելու համար.

2) համայնքներին անհրաժեշտ դիզելային վառելիքի, ազոտական պարարտանյութի և աշնանացան ցորենի լրացուցիչ պահանջի հայտերը ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն.

3) 2014 թվականին անցկացվելիք գյուղատնտեսական համատարած հաշվավարումն իրականացնելիս համագործակցել << ազգային վիճակագրական ծառայության Գեղարքունիքի մարզային գործակալության հետ.

4) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը 100 տոկոս հասցնելու ուղղությամբ՝ պահպանելով համամասնությունն ըստ հարկատեսակների.

5) մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը գույքահարկի և հողի հարկի արխիվացված բազան ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն.

6) մինչև յուրաքանչյուր ամսվա 4-ը ֆինանսական և աշխատավարձերի պարտքերի մասին հաշվետվությունները ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն.

7) 2013 թվականին համայնքներին տրամադրված սուբվենցիաների վերաբերյալ հաշվետվությունները սեղմ ժամկետում ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն.

8) աշխատանքներ տանել վարչական հսկողության արդյունքում գրանցված թերությունները վերացնելու ուղղությամբ.

9) ժամկետանց դիմումներին պատասխանել **սահմանված ժամկետներում**:

ՄԱՐԶՊԵՏ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ